ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

14 հունվարի 2022 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 (վեց) անդամներ:

Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը, Սլավիկ Հարությունյանը, Վարդան Սուքիասյանը, Հայկ Վարդևանյանը :

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը և համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են վեցը քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 03-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի N 32-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

5.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից համայնքի ավագանու անդամ Վահրամ Ապրեսյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 01-Ա/

Քանի որ ավագանու անդամներ Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը, Վարդան Սուքիասյանը և Հայկ Վարդևանյանը բացակայում էին ավագանու նիստից, նրանց բացակայությունների վերաբերյալ հարցերի քննարկումը հետաձգվեց ավագանու հաջորդ նիստին, որտեղ դրանք կքննարկվեն անկախ նրանց ներկայությունից:

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի՝ ըստ հատվածների, որից՝

եկամուտների գծով՝ 429 703.5 հազար դրամ

ծախսերի գծով՝ 479 188.6 հազար դրամ

դեֆիցիտը (պակասուրդը)՝ 49 485.1 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1.

2)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2.

3)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3.

4)համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4.

5)համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5.

6)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 02-Ն/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 03-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի ««Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 03–Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 04-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հունվարի 11-ի N «007-01/Վ-022» գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» N 32-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1)որոշման 1-ին կետը «ավտոտնակը» բառից հետո լրացնել «, 7.6 քմ ընդհանուր մակերեսով ծածկարանը» բառերով.

2)որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածում աղյուսակի 1-ին կետի 2-րդ սյունակը «ավտոտնակ» բառից հետո լրացնել «, ծածկարան» բառով, իսկ 4-րդ սյունակը «ավտոտնակ՝ 82.9» բառից և թվից հետո լրացնել «ծածկարան՝ 7.6» բառով և թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 05-Ա/

<u>Լսեցին</u>

ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վահրամ Ապրեսյանի բացակայելն համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 5 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ _____

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **Հ. ԲԱԼԱՍՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ **Լ. ԱՎՈՒՇՅԱՆ**